

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի Խորհրդի կոնվենցիայի համաձայն

Մոնիտորինգի մեխանիզմը

COUNCIL OF EUROPE

CONSEIL DE L'EUROPE

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՅՍ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 2008թ փետրվարի 1-ից, նպատակաուղղված է մարդկանց թրաֆիքինգի կանխարգելմանը, թրաֆիքինգից տուժածների պաշտպանությանը և դատական կարգով թրաֆիքինգով զբաղվողների հետապնդմանը: Այն վերաբերում է թրաֆիքինգի բոլոր ձևերին (լինեն դրանք ազգային կամ անդրազգային, կազմակերպված հանցավորության հետ կապ ունեցող կամ չունեցող) և ներառում է բոլոր տուժածներին (կանանց, տղամարդկանց և երեխաներին), ինչպես նաև շահագործման բոլոր ձևերը: Կոնվենցիան նաև ներառում է միջոցառումներ, որոնք խրախուսում են միջազգային համագործակցությունը և փոխգործունեությունը քաղաքացիական հասարակության հետ:

Կոնվենցիայի կարևորագույն արժեքը կայանում է նրանում, որ ուշադրության կենտրոնում են գտնվում մարդու իրավունքները և տուժածների պաշտպանությունը: Կոնվենցիան թրաֆիքինգը սահմանում է որպես մարդու իրավունքների խախտում և մարդկային արժանապատվության և անձեռնմխելիության ոտնահարում: Դա նշանակում է, որ երկրների իշխանությունները պատասխանատվություն են կրում, եթե նրանք չեն ձեռնարկում քայլեր մարդկանց թրաֆիքինգը կանխարգելու, թրաֆիքինգից տուժածներին պաշտպանելու և թրաֆիքինգի դեպքերը արդյունավետ հետաքննելու համար:

Մարդկանց թրաֆիքինգը համաշխարհային երևույթ է, որը չի ճանաչում սահմաններ, այդ իսկ պատճառով կոնվենցիան կիրառելի և հասանելի է բոլոր երկրների համար:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԸ

Կոնվենցիան ստեղծել է մոնիտորինգի անկախ մի մեխանիզմ գնահատելու համար, թե ինչպես են իրականացվում նրա դրույթները: Մոնիտորինգի այս մեխանիզմը, որը դիտվում է որպես կոնվենցիայի հիմնական ուժեղ կողմերից մեկը, բաղկացած է երկու հիմնասյուներից՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբից (GRETA) և Կոնվենցիային անդամ պետությունների կոմիտեից:

Ի՞նչ է GRETA-ն

GRETA-ն մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խումբ է, որը պատասխանատու է գնահատելու կոնվենցիայի կատարումը այն վավերացրած երկրների կողմից: GRETA-ն կազմված է կոնվենցիան ստորագրած երկրների 15 անկախ և անկողմնակալ փորձագետներից: Դրանք տարբեր բնագավառների մասնագետներ են (իրավաբաններ, իրավապահ մարմինների աշխատակիցներ, հոգեբաններ, բժիշկներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և այլն) և ընտրվում են իրենց մասնագիտական փորձի հիման վրա կոնվենցիաում ներառված ոլորտներից: GRETA-ի անդամների պաշտոնավարման ժամկետը չորս տարի է՝ ևս մեկ անգամ վերընտրվելու հնարավորությամբ:

Ինչպե՞ս է GRETA-ն իրականացնում մոնիտորինգի իր աշխատանքները

GRETA-ի մոնիտորինգի աշխատանքները բաժանվում են փուլերի: Յուրաքանչյուր փուլի սկզբում GRETA-ն սահմանում է կոնվենցիայի այն դրույթները, որոնք ենթակա են մոնիտորինգի և որոշում է գնահատման առավել համապատասխան ուղին:

Մոնիտորինգի իր աշխատանքներն իրականացնելու ժամանակ GRETA-ն օգտագործում է տեղեկատվություն հավաքելու մի շարք մեթոդներ: Որպես առաջին քայլ GRETA-ն հարցաթերթիկ է ուղարկում գնահատմանը ենթակա երկրի կառավարությանը: Ի պատասխան տրամադրված տեղեկատվությունը վերլուծվում է GRETA-ի կողմից և, անհրաժեշտության դեպքում, GRETA-ն լրացուցիչ տեղեկատվություն է պահանջում պատասխանը հստակեցնելու կամ լրացումներ կատարելու համար:

Բացի հարցաթերթիկ ուղարկելուց GRETA-ն այցելություն է կատարում տվյալ երկիր: Նման այցելությունները թույլ են տալիս մանրազնին քննարկումներ անցկացնել պետական պաշտոնյաների, ոստիկանության աշխատակիցների, դատախազների, խորհրդարանականների և այլ շահագրգիռ կողմերի հետ:

Գնահատման այցելությունները GRETA-ին հնարավորություն են տալիս այցելելու նաև թրաֆիքինգից տուժածներին աջակցություն տրամադրող հաստատություններ: Այսպիսով, GRETA-ն կարող է դիմել ճգնաժամային կենտրոններ կամ թրաֆիքինգից տուժածների ապաստարաններ այցելելու խնդրանքով, որոնք ղեկավարվում են պետական մարմինների կամ ՀԿ-ների կողմից, անօրինական միգրանտների կամ ապաստան հայցողների կենտրոններ, սահմանային կետեր կամ հիվանդանոցներ: Նման այցելությունները հնարավորություն են տալիս ստուգելու կոնվենցիայի կատարմանը միտված քայլերի արդյունավետությունը:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

GRETA-ի համար քաղաքացիական հասարակությունը տեղեկատվության կարևոր աղբյուր է հանդիսանում: Գնահատման այցելությունների ընթացքում GRETA-ն հանդիպումներ է ունենում հասարակական կազմակերպությունների (ՀԿ-ների) ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ներկայացուցիչների հետ (օրինակ՝ արհմիություններ, փաստաբանների միություններ, գիտական հաստատություններ), ովքեր ներգրավված են մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողություններում: GRETA-ն կարող է իր հարցաթերթիկը կամ տեղեկատվություն ստանալու համար իր հարցաղրումները հասցեագրել ՀԿ-ներին և քաղաքացիական հասարակության այլ կառույցներին, որոնք հնարավորություն ունեն օգտվելու տեղեկատվության վստահելի աղբյուրներից և անհրաժեշտության դեպքում ընդունակ են ստուգել այդ տեղեկատվությունը:

GRETA-Ի ԶԵԿՈՒՅՑՆԵՐԸ

Երկրի գնահատման GRETA-ի զեկույցները ներառում են յուրաքանչյուր երկրում մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործողությունների հետ կապված իրավիճակի վերլուծությունները և կոնվենցիան ավելի արդյունավետ իրականացնելու առաջարկությունները: Զեկույցները կազմվում են փոխհամագործակցության մթնոլորտում և նպատակաուղղված են աջակցելու պետություններին իրենց գործողություններում:

GRETA-ն քննարկում է գնահատման զեկույցների նախագծերն իր լիազումար նիստերին: Այնուհետև զեկույցի նախագիծն ուղարկվում է համապատասխան կառավարությանը մեկնաբանությունների համար, որոնք հաշվի են առնվում GRETA-ի կողմից վերջնական զեկույցի պատրաստման ժամանակ: Այս վերջնական զեկույցը փոխանցվում է համապատասխան երկրի կառավարությանը, ում առաջարկվում է ներկայացնել ցանկացած եզրափակիչ մեկնաբանություններ: Այնուհետև GRETA-ի կազմած զեկույցը, կառավարության ցանկացած մեկնաբանությունների հետ, ներկայացվում է հանրությանը:

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Մոնիտորինգի մեխանիզմի երկրորդ հենասյունը՝ Կոնվենցիային անդամ պետությունների կոմիտեն, կազմված է կոնվենցիան վավերացրած երկրների ներկայացուցիչներից: GRETA-ի զեկույցների հիման վրա Կոնվենցիային անդամ պետությունների կոմիտեն կարող է GRETA-ի կատարած եզրակացությունների հիման վրա միջոցառումների իրականացման հանձնարարականներ մշակել առանձին երկրների համար:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻՑ ՄԻՆՉև ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի շրջանակներում իրականացվող մոնիտորինգի աշխատանքը եռակի նշանակություն ունի՝

- գնահատում և խթանում է կոնվենցիայի շրջանակներում ստանձնած հետագա պարտականությունների կատարումը,
- հանդիսանում է խոչընդոտների հաղթահարման ուղեցույց,
- ներկայացնում է միջազգային համագործակցության մի համաժողով, որտեղ կողմերը կարող են կիսել իրենց տնօրինած տեղեկատվությունն ու լավագույն փորձը և որտեղ միջազգային հանրությունը տեղեկացվում է ցանկացած նոր միտումների մասին, դրանով իսկ խթանելով համատեղ գործողություններ՝ խնդիրները կանխելու և լուծելու համար:

Մոնիտորինգի արդյունքները հասանելի են առցանց և դարձել են տեղեկատվական աղբյուր բոլոր նրանց համար, ով ներգրավված է մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում: Եվրոպայի Խորհուրդն աջակցում է նաև կառավարություններին կոնվենցիայի իրականացման, ինչպես նաև այն հանձնարարականների կատարման հարցում, որոնք ի հայտ են եկել մոնիտորինգի ժամանակ:

Կոնտակտների և լրացուցիչ տեղեկատվության համար

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի քարտուղարություն (GRETA և Կոնվենցիային անդամ պետությունների կոմիտե)
Եվրոպայի խորհուրդ / Council of Europe
F-67075 Strasbourg Cedex
Ֆրանսիա / France
E-mail: Trafficking@coe.int

www.coe.int/trafficking

THB-INF (2013)1

PREMS 233713 – ARM – © Council of Europe – Photo credit: Council of Europe / Shutterstock